# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

# Հ Ր Ա Մ Ա Ն

24 հունվարի 2023թ. թիվ 49

## Տ.ԹՈՐՈՍՅԱՆԻՆ ԵՎ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ ԱԼԱՎԵՐԴԻ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ, 10-րդ և 22-րդ կետերով, հիմք ընդունելով Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության պետի զեկուցագիրը՝

Հ ր ա մ ա յ ո ւ մ  եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի գլխավոր մասնագետ Տիգրան Թորոսյանին և նույն վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնի ավագ մասնագետ Աշոտ Նալբանդյանին ս/թ հունվարի 25-ին մեկ օրով գործուղել Ալավերդի՝ դպրոցների վերանորոգման ծրագրով իրականացված աշխատանքները դիտարկելու համար:

2. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը՝ բացառությամբ ճանապարհածախսի:

3. Գործուղման ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ «Mulberry» համակարգով ներկայացնել հաշվետվություն՝ ըստ սահմանված կարգի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

24/01/2023

X 

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ

2023թ. հունվարի 24
ք.Վանաձոր